ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ **2022 թ. սեպտեմբերի 29**-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

ՀՀ, ք. Երևան 29.09.2022 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2022 թ. սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 1 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 88 անդամներից 60-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
2. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ ԵՊՀ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Հ. Վարդևանյան):
3. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան):
4. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատագրման փորձագիտական զեկույցում թերությունների վերացման վերանայված ծրագիր (զեկ.՝ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Ս. Բուդաղյան):

6. ««Պրակտիկում» նոր կրթական մոդուլի ներդրման և փորձարարական հեռուստաընկերություն հիմնելու մասին» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Ն. Մարտիրոսյան):
7. «Բարեփոխումները Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խ. Վ. Ներկարարյան):

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ողջունելով ընթացիկ ուստարվա առաջին նիստի կապակցությամբ, հաջողություն ու աշխատանքային արդյունավետ գործունեություն մաղթեց: Այնուհետև ռեկտորը տեղեկացրեց, որ օգոստոսին Բուլղարիայում տեղի է ունեցել Մաթեմատիկական միջազգային ուսանողական 29-րդ օլիմպիադան (International Mathematics Competition), որին ԵՊՀ ուսանողներ Վահան Մարտիրոսյանը, Վահե Կարագուլյանն ու Տիգրան Չթչյանն արժանացել են ոսկե, Գագիկ Մելքումյանը՝ արծաթե, իսկ Վաչագան Դիլանյանը՝ բրոնզե մեդալի: Հովհաննես Հովհաննիսյանը, շնորհավորելով ԵՊՀ օլիմպիական թիմի մասնակիցներին ու մարզիչներին, նորանոր հաջողություններ մաղթեց, ապա նրանց խրախուսական նվերներ հանձնեց՝ նշելով, որ օլիմպիադաների մասնակցությունն անչափ կարևոր է, իսկ հաղթանակները՝ պատվաբեր ու հաճելի:

ԵՊՀ օլիմպիական թիմի մարզիչ, ԲՈԿ-ի նախագահ Կարեն Քեռյանը, շնորհակալություն հայտնելով ուշադրության ու այս տարիների ընթացքում ցուցաբերած աջակցության համար, նշեց, որ օլիմպիադաները յուրօրինակ միջավայր են ստեղծում և նպաստում ուսանողների զարգացմանն ու մասնագիտական գիտելիքների ամրապնդմանը: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Արթուր Սահակյանն էլ հավելեց, որ մաթեմատիկական օլիմպիական շարժումը սկիզբ է առել դեռևս 2005 թվականից, և այդ օրվանից ԵՊՀ թիմերը մրցել են մոտ 100 համալսարանների ավելի քան 500 մասնակիցների հետ՝ պատվով ներկայացնելով համալսարանը:

Հաջորդիվ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը խնդրեց պարզաբանել՝ ճիշտ են այն լուրերը, ըստ որոնց՝ «Հայագիտության հարցեր» ամսագիրը կա՛մ փակվում է, կա՛մ անվանափոխվում՝ փոխելով բովանդակությունը: Ըստ նրա՝ լուրերի իսկության դեպքում այդ քայլը ընդդեմ հայագիտության է: Պատասխանելով պարոն Ավագյանի հարցին՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի նորանշանակ տնօրեն Վահրամ Պետրոսյանը նշեց, որ ամսագրում գերակշռում էին բանասիրական նյութերը, իսկ հայագիտականը միայն բանասիրականը չէ: «Ինստիտուտի զարգացման իմ տեսլականով այդպես չպետք է լինի: Իմ գործընկերների հետ մենք պատրաստում ենք նոր ռազմավարություն, ըստ որի՝ «Հայագիտության հարցեր» ամսագրում չպետք է տեղ գտնեն այնպիսի նյութեր, որոնք չկան մեր առաջնահերթություններում»,– ընդգծեց Վ. Պետրոսյանը:

Ըստ պարոն Պետրոսյանի՝ հետազոտությունների շրջանակը պետք է ընդլայնվի, և առաջին հերթին պետք է իրականացվեն վերլուծություններ, որոնք կնպաստեն նաև պետական քաղաքականության առավել արդյունավետ մշակմանը: Բացի դրանից՝ պարոն Պետրոսյանի հավաստմամբ պետք է աշխատանքներ տարվեն նաև դեսպանատների հետ:

ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանն էլ հիշեցրեց, որ համալսարանում ներկայումս լույս է տեսնում հայագիտական ուղղվածությամբ 3 ամսագիր, որոնք շարունակում են լույս ընծայվել: ««Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը հոդվածների կարիք ունի: Չկա մի հեղինակ, որի աշխատանքն անհիմն պատճառներով լույս չի տեսել, իսկ ամսագրերը կարող են փոխել իրենց բովանդակությունը, թեմատիկան ու հրապարակումների ընդգրկման քաղաքա-կանությունը: Դրա մեջ որևէ տարօրինակ բան չկա»,– ընդգծեց հրատարակչության տնօրենը:

ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը փաստեց, որ ամսագրերի կազմման քաղաքականությունը որոշում է խմբագրական խորհուրդը. այլ ձևաչափ ու միջամտություններ չպետք է լինեն:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին՝ առաջարկելով հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը:

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: Նիստի ներկայացված օրակարգին հավանություն տալուց հետո ԵՊՀ գիտխորհուրդը հաստատեց ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, ըստ որի՝ անցկացվելիք նիստերի ընթացքում կքննարկվեն տարբեր հարցեր, ծրագրեր ու առաջարկներ: ԵՊՀ տնտեսագիտության ու կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանն առաջարկեց ԵՊՀ ԳԽ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցում ընդգրկել նաև ֆակուլտետների կողմից ներկայացվող զեկուցումները՝ կրթության ու գիտության ոլորտներում իրականացվող նախաձեռնությունների վերաբերյալ: Առաջարկն ընդունվեց: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 60, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը.

ԵՊՀ գիտական խորհրդի 2022/2023 ուսումնական տարվա
1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույց

Հ/հ	*Հարց*	*Ժամկետ*	*Պատասխանատու*
1.	ԵՊՀ գիտական խորհրդի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ժամանակացույցի հաստատում	սեպտեմբեր	Մ. Վ. Հովհաննիսյան
2.	ԵՊՀ 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների անվանացանկի հաստատում	սեպտեմբեր	Հ. Գ. Ժամհարյան
3.	Հաղորդում 2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին	հոկտեմբեր	Է. Վ. Ասրիյան
4.	Հաղորդում 2022-2023 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին	հոկտեմբեր	Հ. Գ. Ժամհարյան
5.	Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին	հոկտեմբեր	Հ. Գ. Ժամհարյան
6.	Տեղեկատվություն 2021-2022 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին	հոկտեմբեր	Տ. Ս. Գալստյան
7.	Հաղորդում ԵՊՀ ՈՒԳԸ 2021-2022 ուստարվա գործունեության մասին	հոկտեմբեր	Մ. Ս. Փանոսյան
8.	Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2021 թ. հարցման արդյունքների մասին	նոյեմբեր	Ա. Ս. Բուդաղյան
9.	Հաղորդում ԵՊՀ զարգացման 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2021-2022 ուստարի) մասին	դեկտեմբեր	Հ. Վ. Հովհաննիսյան
10.	Հաղորդում ԵՊՀ 2022 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին	դեկտեմբեր	Ռ. Գ. Գրիգորյան

11.	**Հաղորդում ԵՊՀ 2022 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին**	**դեկտեմբեր**	**Ռ. Գ. Գրիգորյան**
12.	**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2021-2022 ուստարվա գործունեության մասին**	**դեկտեմբեր**	**Ա.Վ. Մակարյան**
13.	**ԵՊՀ դասախոսների մասնագիտական զարգացման կրթագիտական ծրագրի հաստատման մասին**	**դեկտեմբեր**	**Լ. Զ. Խառատյան**
14.	**Հաղորդում պիլոտային ծրագրի մասին**	**դեկտեմբեր**	**Է. Վ. Ասրիյան**
15.	**Ստորաբաժանումների կանոնադրությունների, կարգերի հաստատում, փոփոխություններ և լրացումներ, կրթության և գիտության ոլորտներում իրականացվող նորարարական նախաձեռնություններին վերաբերող զեկույցների ներկայացում**	**Կիսամյակի ընթացքում**	**Հ. Վ. Հովհաննիսյան**

2. **Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:** ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ Պողոս Վարդևանյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում շնորհելու երկու հայցերը՝ փաստելով, որ ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են պահանջվող չափորոշիչներին և երաշխավորվել են հանձնաժողովի կողմից: Ըստ այդմ՝ դոցենտի պաշտոնի երկու հավակնորդներ ստացել են դրական երաշխավորություն ու ներկայացվել ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին Կիրառական էլեկտրադինամիկայի և մոդելավորման ամբիոնի ասիստենտ Հասմիկ Աշոտի Շահինյանն ու Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի ասիստենտ Լևոն Գառնիկի Բաբաջանյանը:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Եզնիկ Միրզոյան (նախագահ),
2. Տիգրան Գալստյան,
3. Սյունե Ստեփանյան:

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 60 անդամներից 60-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ե. Միրզոյանը ԳԽ նիստի վերջում ներկայացրեց քվեարկության արդյունքները: Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Շահինյան Հասմիկ Աշոտի	57	2	1
2.	Բաբաջանյան Լևոն Գառնիկի	59	0	1

Որոշվեց.
դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

3. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ գերմանական բանասիրության և ֆրանսիական բանասիրության ամբիոնների վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումները: Հայտարարվեց փակ գաղտնի քվեարկություն: Օրակարգային հարցերի սպառումից հետո հաշվիչ հանձնաժողովը հայտարարեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
1.	Սավոյան Գայանե Վլադիմիրի	Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ	30.09.2022 թ.
2.	Սարգսյան Գայանե Ռուդոլֆի	Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ	30.09.2022 թ.

Որոշվեց.
հաստատել ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված ամբիոնների ներքոհիշյալ վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

4. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում:

ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հրանտ Ժամհարյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի՝ անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումները, որոնք հավանության արժանացան: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 60, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդ-ների ընդունած որոշումները:

5. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատագրման փորձագիտական զեկույցում թերությունների վերացման վերանայված ծրագրի» ներկայացում:

Օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Արմեն Բուդաղյանը ներկայացրեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում թերությունների վերացման վերանայված ծրագիրը: Առաջարկվեց ֆակուլտետներում շարունակել իրականացնել քննարկումներ և հանդես գալ առաջարկներով:

6. ««Պրակտիկում» նոր կրթական մոդուլի ներդրման և փորձարարական հեռուստաընկերություն հիմնելու մասին» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Ն. Մարտիրոսյան):

ԵՊՀ գիտական խորհրդի նիստերում այսուհետ կներկայացվեն զեկույցներ՝ կրթության ու գիտության ոլորտներում իրականացվող նորարարական նախաձեռ-նությունների վերաբերյալ: Առաջին զեկույցները ներկայացրին ԵՊՀ ժուռնալիստիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների դեկանները:

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսյանը ԳԽ-ին զեկուցեց «Պրակտիկում» նոր կրթական մոդուլի ներդրման ու փորձարարական հեռուստաընկերություն հիմնելու մասին: Ըստ պարոն Մարտիրոսյանի՝ դասընթացի շրջանակում 3-4-րդ կուրսերի ուսանողները շաբաթական մեկ օր պարտադիր պետք է լինեն որևէ լրատվամիջոցի խմբագրությունում: Ն. Մարտիրոսյանը ներկայացրեց նաև ստեղծվելիք փորձարարական հեռուստաընկերության նպատակներն ու ակնկալիքները:

7. «Բարեփոխումները Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խ. Վ. Ներկարարյան):

Օրակարգային վերջին հարցին անցնելով՝ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խաչատուր Ներկարարյանը հանդես եկավ «Բարեփոխումները ռադիոֆիզիկայի

ֆակուլտետում» թեմայով զեկուցմամբ՝ ներկայացնելով ֆակուլտետի հաջողությունները, խնդիրները, լուծման առաջարկներն ու զարգացմանը միտված ծրագրերը:

Ներկայացված զեկուցումներին առնչվող քննարկումների ժամանակ հնչեցին տարբեր դիտարկումներ ու պարզաբանումներ:

Օրակարգային հարցերի սպառումից հետո ԵՊՀ գիտքարտուղար Մերի Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ մեկնարկել է «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի ներբուհական փուլը, որին մասնակցելու համար ուսանողները, ի թիվս այլ փաստաթղթերի, պետք է ներկայացնեն նաև մրցույթին առաջադրման մասին իրենց ֆակուլտետի գիտխորհրդի նիստի արձանագրության քաղվածք: Մ. Հովհաննիսյանը նշեց, որ մինչև հոկտեմբերի 15-ն անհրաժեշտ է ֆակուլտետային գիտխորհրդի նիստի օրակարգում ներառել հարցը, իսկ եթե նիստ արդեն տեղի է ունեցել, ապա՝ այն քննարկել հարցման կարգով:

Նիստի ավարտին ձևավորված հաշվիչ հանձնաժողովի նախագահ Եզնիկ Միրզոյանը ներկայացրեց քվեարկությունների արդյունքները, ըստ որոնց՝ ԳԽ-ն հաստատեց ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումները, ինչպես նաև բավարարեց դոցենտության երկու հայտերը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ Մ. Վ. Հովհաննիսյան

29.09.2022 թ.